ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆ

ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՃԱՏԻՒՐԵԱՆՑ

Հանգեաւ ի Տէր.

Հանգուցեալը ի մանկութենէ հետէ Մայր Աթոռոյս ժառանգաւորաց դպրանոցում ուսանելով 1873 թուին Սարկաւագ և 1876 թուին Աբեղայ ձեռնադրուեց ի միաբանակցութիւն Մողնւոյ Ս. Գէորգայ վանուց և 1878ին մասնաւոր վարդապետութեան աստիճան ստացաւ։

Հանգուցեալը վարել է Մողնւոյ Ս. Գէորգայ, Մաղարթու Ս. Ստեփաննոս Նախավկայի և Մեղրւոյ վանուց վանահայրութեան պաշտօնները. 1884ին կոչուելով ի Մայր Աթոռս ի միաբանակցութիւն՝ միամսեայ հիւանդութիւնից յետոյ 38 ամեայ հասակում, ամսոյս 9ին կնքեց իւր մահկանացուն և ամսոյս 10ին պատշաճաւոր յուղարկաւորութեամբ թաղուեց Մայր Աթոռոյս Միաբանութեան գերեզմանոցում։

Աղօթենք առ Աստուած ի լոյս երեսաց իւրոց հանգուցանել հանգուցելոյ հոգին, ի տեղի նորա արժանաւոր պաշտօնեաներ յարուցանելով ի սպասաւորութիւն Ս. Եկեղեցւոյ։